Գլ. Է.

«Ո՛չ է պարտ ծածկել ճշմարտութեան և ընդ փակմամբ լինել լուսոյ։ Յետ բազում ժամանակաց երևեալ նորա երկիւղած արանց ոմանց տեսլեամբ՝ գան միախումբ՝ ժողովով 'ի տեղի գրոյն անդ և տեսանեն ոսկերս յոգունս շեղջակուտեալս՝ և առհասարակ տարակուսեցան, սակայն հանեին դիզեցին և հսկեցին յաղօթս գիշերին զայն։ Եւ եղև յառաւօտուն շարժումն մեծ՝ մինչև որ անդն կային անկանել յերկիր։ Եւ եկն հողմն սաստիկ յանապատէն՝ ցիրեցան արարեալ զանարգոյն ոսկերս ընդ դաշտըն ամենայն, և մնաց միայն 'ի տեղւոջն առաքելականն այն նշխարք. զորոյ զգլուխն միայն մեծահաւատ ումն Ստեփաննոս քահանայ յՈւռեկան գեղջէ յափշտակեալ 'ի միջոյ անճապարեալ յերիվար իւր 'ի բաց գնաց, և շարժեալ բազմութիւն զկնի նորա. մառախուղ խաւարային ընդ մէջ անցեալ զարհուրեցոյց զնոսա, որք և դարձան 'ի բանակն, և տեսլեամբ յայտնեալ սըրբոյն Եղիշայի տարան հանգուցին զնշխարս նորա, որ եղեալ էր գլուխն յաւանն Ուռեկան 'ի ձեռն սրբոյ քահանային Ստեփաննոսի, և ապա անտի փոխեցին 'ի Ներս-միհրայ սուրբ ուխտն, որ այժմ կոչի Ջրվշտիկ 'ի փառս Տեառն Աստուծոյ ամենակալի։ Իսկ յետ բազում ժամանակաց բարեպաշտն Վաչական Աղուանից արքայ կանգնեաց զսիւն 'ի գրի նահատակութեան, սենեկապանն արքայի մենակեաց եղեալ 'ի վերայ սեանն՝ կատարի»։

Նոյն պատմագիրը, մեր Լուսաւորչի թոռն Գրիգորիսի Աղւանից առաջին կաթուղիկոսի համար այսպէս գրէ (գլ. Թ. երես 11-12)։

«Վասն զի երանելին Եղիշա զառաքելագործն մշակութիւն 'ի ծագաց երկրի սկսեալ լուսաւորեաց զմասունս ինչ միայն արևելեայցս հիւսիսոյ, այլ ո՛չ զամենեսին, և նոյն ինքն զբարուքըն կատարեալ զմարտ՝ ի վերայ ժողովրդեանն իւր ճգնեցաւ։ Այլ յո՛ր ժամանակս այց արար Աստուած ազգի մարդկան և ընդհանուր ծաղկեցոյց զարևմտեանն կոյս՝ մեծ կայսերըն Կոստանդիանոսիւ և լուսաւորեաց զմեծ Հայս երանելեաւն Տրդատաւ. ած 'ի հաւատս և զելս Արեգականն, չորք սակաւ ինչ ծանուցեալ